

## ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԲԱՌ ՈՒ ԲԱՆԸ

Ա. Տ. ՂԱՆԱԿԱՆՅԱՆ

Մեսրոպ Մաշտոցի աշակերտ ու գործակից Կորյունի վկայությունից հայտնի է, որ հայատառ առաջին գրական երկը մեզանում եղել է Հին Կտակարանի ուշագրավ գրքերից մեկի՝ Սողոմոնի Առակաների թարգմանությունը, կատարված Մաշտոցի և նրա երկու աշակերտների կողմից, հայերեն նշանադրերի ստեղծումից անմիջապես հետո: Այդ մասին Կորյունն իր «Վարք Մաշտոցի» մեջ հետևյալն է գրում: Հայերեն նշանագրերը ամբողջապես հորինելուց հետո («միանգամայն յօրինեալ և յանկուցեալ»), Մեսրոպ Մաշտոցը «...ի թարգմանութիւն գառնայր հանգերձ արամբք երկուք, աշակերտօք՝ իւրովք. որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յսկեղեաց գաւառէն, և երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղանական տանէն: Եւ եղեալ սկիզբն թարգմանելու զգիրս նախ յԱռական Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ յինել...»:

Սողոմոնի Առակաները իրենից ներկայացնում է հին երբայեցիների բանավոր պատգամներից ու թեապոր խոսքերից կազմված մի ուրույն ժողովածու, ուր բնությունից, կենդանական աշխարհից ու մարդկային կյանքից վերցված համապատասխան օրինակներով, այլաբանության ու փոխաբերության նմանության ու հակադրության միջոցով, բացահայտված են մարդկային-հասարակական կյանքի երևույթներն ու հարաբերությունները, վեր են հանված իմաստությունն ու հանճարը, ճշմարտությունն ու արդարությունը, աշխատանքն ու խաղաղությունը, ընտանեկան հավատարմությունն ու համերաշխությունը, և միաժամանակ դատապարտված են՝ շարիքն ու կեղծիքը, անիրավությունն ու թշնամանքը, ամբարշտությունն ու անառակությունը և այլն:

Սողոմոնի Առակաների, ինչպես և Հին Կտակարանի մյուս գրքերի մեջ, կարելի է հանդիպել նաև շահագործման ու հարստահարության դատապարտություն, ընդհանուր հավասարության գաղափարի քարոզ, աստծու բարկության մը և հանդերձյալ կյանքով անիրավ իշխողների հասցեին ուղղված սպառնալիքներ: Եվ դա հասկանալի է, որովհետև տվյալ երկերն իրենց բանահյուսական ակունքներով սերում են այն հեռավոր դարերից, երբ քրիստոնեությունը դեռ չէր դարձել պետական կրոն և հանդիսանում էր ստրուկների և ընչազուրկների իղձերի ու ակնկալությունների յուրահատուկ արտահայտությունը:

Հին Կտակարանի մյուս գրքերի հետ, Սողոմոնի Առակաները ևս դարերի ընթացքում նկատելի դեր են խաղացել քրիստոնեությունն ընդունած բազմաթիվ ժողովուրդների հոգևոր կյանքում, ավելի կամ պակաս շափով, ազդելով

ոչ միայն նրանց հավատալիքների ու կրոնական բմբռնումների, այլև հասարակական-բարոյական, իմաստասիրական, գեղագիտական հայացքների, գրականության, բանավոր ստեղծագործության ու լեզվի վրա:

Սողոմոնի Առականների նմանօրինակ ազդեցության փաստն անուրանալի է և հայ իրականության համար: Հատկանշական է, որ այն մեզանում տարածվել է ոչ միայն Հին Կտակարանի միջոցով, իբրև վերջինիս բաղկացուցիչ գրքերից մեկը, այլև անկախ կերպով, ինչպես նաև մի շարք հատրնտիրների ու ժողովածուների («Ոսկեփորիկ», «Ճառերնտիր») միջոցով, ուր այն մուտք է գործել թե՛ առանձին և թե՛ նշանավոր Երգ Երգոցի և Հին Կտակարանի ուրիշ հետաքրքիր գրքերի հետ միասին:

Շատ են եղել Հայաստանում Սողոմոն իմաստունի անձնավորության ու կյանքի շուրջը հյուսված ժողովրդական գրույցներն ու մանրապատումները, որոնք բազմաթիվ նմանակներով ու տարբերակներով պատմվել են մեր գանազան գավառներում (ինչպես արևելահայ, այնպես էլ արևմտահայ): Հիշենք դրանցից մի քանիսի վերնագրերը միայն. «Սողոմոն իմաստունն ու կնիկը» կամ «Սողոմոն իմաստունն ու քոռ բուն», «Սողոմոնն ու նախրապանը», «Սողոմոն իմաստունն ու աղքատ գյուղացին», «Սողոմոնն ու մրջյունը», «Սողոմոն իմաստունն ու պարծենկոտ ճնձղուկը» և այլն:

Սողոմոնի Առականների մեզանում վայելած ժողովրդականության պերճախոս վկայություններից է և այն, որ Հայաստանի տարբեր գավառների բնակիչները խելոք մարդուն բնութագրելու և նրա նկատմամբ իրենց դրական վերաբերմունքն արտահայտելու համար, սովորաբար ասել են. «Սողոմոն իմաստունի խելքն ունի», «Սողոմոն իմաստունի մոտեն կուգա», «Իսկը Սողոմոն իմաստունն է» և այլն:

Բացի տվյալ գործի ժողովրդային բովանդակությունից, դրա համար պակաս նշանակալից դեր չի խաղացել նաև այն, որ Մեսրոպ Մաշտոցի ու նրա գործակիցների թարգմանական լեզուն եղել է ոչ թե հետագա դարերի մեր մագաղաթյա որոշ մատյաններին հատուկ գրքային խրթին գրաբարը (հատկապես հունարան դպրոցի հեղինակների), այլ բավական պարզ ու հասկանալի մի լեզու, որը, Մանուկ Աբեղյանի հեղինակավոր կարծիքով, քիչ է տարբերվել ժամանակի ընդհանուր խոսակցական լեզվից:

Սողոմոնի Առականները սկսվում են «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանեառոյ» նախադասությամբ, որը կոչ է անում մարդկանց հետևելու տվյալ լուսավոր պատգամին: Մեսրոպատառ այբուբենով գրված առաջին հայերեն բառերն են սրանք, հարազատ իմաստության ու հանճարի հարգն իմացող խաղաղասեր ու ստեղծագործ աշխատավոր ժողովրդին:

Այն հանգամանքը, որ Մեսրոպ Մաշտոցը նպատակահարմար է գտել առաջին հերթին հայերենի վերածելու ոչ թե նոր Կտակարանը կամ Ավետարանը, այլ ավանդական Սողոմոն իմաստունին վերագրված առականների ժողովածուն («Առակք Սողոմոնի»), խոսում է այն մասին, որ մեր մեծ լուսավորչի մտահոգության առարկան, տվյալ դեպքում, հանդիսացել է նաև իր հայրենակիցների համար հետաքրքիր ու մատչելի բովանդակությամբ, դաստիարակչական բունությամբ գրքի ստեղծումը, ճիշտ այնպես, ինչպես որ հայերեն նշանագրերը հորինելու համար նրան դրդում էին տվել հարազատ ժողովրդի քաղաքական

2 Մ. Առեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա, Երևան, 1944, էջ 87:

ծանր կացությունը, նրա ազդային անկախության, լուսավորության ու կրթության զարգացման կենսականորեն անհրաժեշտ պահանջները:

Այս կերպ դատելու հիմք են տալիս վերոհիշյալ գրքերի (Ավետարան և Սողոմոնի Առակներ) բնույթի ու բովանդակության միջև եղած էական տարբերությունները: Այն ժամանակ, երբ Ավետարանն ունի, հիմնականում, քրիստոնեական, կրոնա-բարոյախոսական բնավորություն, Սողոմոնի Առակները աչքի են ընկնում իրենց աշխարհիկ ոգով, խրատական-դաստիարակչական միտվածքով, հասարակական-բարոյական առողջ սկզբունքներով և բանահյուսական ակներև տարրերով:

Մերոպ Մաշտոցի՝ Սողոմոնի Առակների թարգմանության գործում ունեցած ազգային-ժողովրդական և բարոյա-դաստիարակչական որոշակի նկրտումներն են վկայում Կորյունի խոսքերն այն մասին, որ նա (Մաշտոցը) «մտքում դրած է եղել ավելի հոգալ համայն աշխարհի (այս է՝ Հայաստանի) ժողովրդին մխիթարելու մասին», որ նա՝ «շատ նեղություններ է քաշել իր ազգին մի բարի օգնություն գտնելու համար»<sup>3</sup>: Նույն բանն են հավաստում նաև իր իսկ Մաշտոցի կողմից սրտի խորքից ասված հետևյալ խոսքերը, որ բառացի բերում է Կորյունը իր «Վարք Մաշտոցի» մեջ. «Տրտմություն է ինձ համար, և անպակաս են իմ սրտի ցավերն իմ եղբայրների ու ազգակիցների համար»<sup>4</sup>: Այսպիսով, Մերոպ Մաշտոցն ու իր գործակից-աշակերտները թարգմանելով Սողոմոնի Առակները, դրանով իսկ ճանապարհ են բացել իրենց հայրենակիցների համար դեպի միջազգային լայն տարածում ու նշանակություն ունեցող աշխարհիկ բովանդակությամբ և ժողովրդական ոգով տվյալ երկր:

Որդեգրելով իր առաջին մեծ ուսուցչի՝ ձեռքով թարգմանված Սողոմոնի Առակները, հայ ժողովուրդը դրանով իսկ հաղորդակից է դարձել նրա կողմից իրեն ի պահ տրված իմաստության ու հանճարի դարավոր ավանդներին: Հին աշխարհի մի քանի ժողովուրդների լայն զանգվածների հասարակական-բարոյական հույզերն ու մտորումներն արտահայտող վերոհիշյալ ստեղծագործությունները իրենց համար պարարտ հող են գտել Հայաստանում: Ժամանակի ընթացքում արմատներ բռնելով այստեղ, դրանք ստացել են տեղական երանգավորում, վերամշակվել հայկական ոճով ու ոգով, և մտնելով մեր ժողովրդի ստեղծած բուն ազգային առած-ասացվածքների շարքը, ձուլվել են վերջիններիս հետ, յուրովի հարստացնելով հայոց բառ ու բանի գանձարանը:

Մի շարք բնորոշ զուգադրություններով հաստատենք մեր դրույթը:

Սողոմոնի Առակներում կարդում ենք. «Որ նիւթէ զբարիս՝ խնդրէ զնորհս բարութեան» (զլ. ԺԱ, 27)<sup>5</sup>, «Որ խրատէ զչարս՝ առցէ անձին իւրում» (զլ. Թ, 7), «Որ փութ խորխորատ ընկերի իւրում՝ ինքն լցցէ գնա» (զլ. ԻԶ, 27): Դարավոր փորձի արդյունք այս խելամիտ նախազգուշացում-ընդհանրացումների մեջ կարճ ու կտրուկ ձևով տրված են մարդկային բարի ու շար գործերի ճշմարտացի բնութագիրն ու գնահատականը:

Հար և նման ընդհանրացումներ են նաև հայ ժողովրդական առած-ասացվածքների մեջ հանդիպող հետևյալ պատգամները. «Լավություն կանես՝ քեզ

<sup>3</sup> Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 41, 49:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 41:

<sup>5</sup> Այս և հաջորդ բոլոր տառերն ու թվերը ցույց են տալիս «Հին Կտակարանի» (Վենետիկ-1860) «Առակք Սողոմոնի» գրքի համապատասխան գլուխներն ու դրվագները:

կանես» (122)<sup>6</sup>, «եսեր (=բարի), կր գտնի իր տեր» (127), «Չարությունը շարունակում կր բերես» (123), «Ուրիշի հոր փորոզը, ինձ կրնկնի մեջը» (123) և այլն:

*Սողոմոնի Առականերում կարգում ենք.* «Լալ և աղատ աղար, քան գմեծատուն սուտ» (զլ. ԺԹ, 22), «Լալ և անուն բարի, քան զարծար և զուկի» (զլ. ԻԲ, 1): Ընչազուրկ խավերի տրամադրությունների արձագանքն հանդիսացող այս թեմայի խոսքերի մեջ, շեփուկելով հանդերձ բարեկեցիկ պայմանների անհրաժեշտությունը կյանքում, այն միտքն է արժարժված, թե մարդկային արժանիքների զխավոր ցուցանիշը ոչ թե հարստությունն է կամ ունեցվածքը, այլ բարոյական հատկանիշները:

*Վերոհիշյալ խոսքերն են մոտիկից հիշեցնում և հետևյալ հայկական առած-ասացվածքները.* «Լավ և մարմնավոր աղատ, քան հոգևոր» (301), «Բարի անունն ավելի լավ է, քան աշխարհի գանձը» (96), «Աղատը հացի կարոտ է, հարուստը՝ ամեն բանի» (221) և այլն:

*Սողոմոնի Առականերում կարգում ենք.* «Որ զորձ, գերկիր՝ յագեսցի հացի» (զլ. ԺԲ, 11), «Խնամ կալ բանջարոց ի դաշտի և ի հնձես խոտ» (զլ. ԻԷ, 25), «Երբ առ մրջյունն... և լեր իմաստնագոյն ևս քան զնա, զի նորա... պատրաստ, ամառանի զկերակուր...» (զլ. Զ, 6): Այս երեք տարբեր խրատների մեջ էլ աղերսակից մտքեր են արտահայտված. այն, որ մարդիկ հեռու պետք է մնան ծուլությունից ու ձրիակերությունից, պետք է լինեն աշխատասեր ու հեռատես, ապրեն սեփական քրտնքի վաստակով:

*Նմանօրինակ իմաստներ ունեն նաև հետևյալ հայկական առած-ասացվածքները.* «Ով կր դատի, նա կուտի» (215), «Մինչև բոստան շքանես՝ ձմերուկ չի բուսնի» (121), «Մրջիմի պես դատող ու հեռատես էլի» (195) և այլն:

*Սողոմոնի Առականերում կարգում ենք.* «Լալ և բարեկամ մերձաւոր՝ քան զերրայր հեռաւոր» (զլ. ԺԸ, 24): Այստեղ ակնարկված է այն միտքը, ըստ որի մարդկային հարաբերությունների մեջ հիմնականը ոչ թե արյունակցական-ազգակցական կապն է, այլ հասարակական, կենցաղային մոտիկությունն ու շփումը, փոխմբռնումն ու փոխօգնությունը:

*Սողոմոնյան նշված «առակին» ըստ ամենայնի համահայտն են հետևյալ հայկական առած-ասացվածքները.* «Մոտիկ հարեանը լավ ա, քան հեռու բարեկամը» (224), «Սրտակից դրկիցը անսիրտ խստորից լավ է» (224) և այլն:

*Սողոմոնի Առականերում կարգում ենք.* «Իմաստուն կանայք՝ շինեցին տունըս, իսկ անգամբն ձեռով իրեանց կործանեցին» (զլ. ԺԿ, 1): Ծշմարտացի այս ընդհանրացման մեջ բացահայտված է ընտանիքի պահպանման ու բարգավաճման գործում ազնիվ ու խելոք կանանց ունեցած անփոխարինելի դերը: Նույնական զաղափար է ընկած նաև հետևյալ հայկական առած-ասացվածքների հիմքում. «Կնիկ կա՝ տուն կր շինել, կնիկ կա՝ տուն կր բանդել» (269), «Լավ կնիկը տուն ու տեղ է, վատ կնիկը՝ ցավ» (269), «Կնիկը որ լավ լինի, մի գնա հարսանիք, տունը ամեն օր հարսանիք է ու հարսանիք. բե կնիկը վատ լինի, մի գնա մեռելաբան, տունը ամեն օր մեռելաբան է ու մեռելաբան» (268) և այլն:

<sup>6</sup> Այս և հաջորդ բոլոր թվերը ցույց են տալիս «Առածանի» ժողովածուի (Երևան, 1960) համապատասխան էջերը:

Սողոմոնի Առականներում կարգում ենք. «Ուրդի իմաստունն՝ ուրախ առնել զհայր, որդի անմիտ՝ տրտմութիւն է մօր» (դէ. Ժ, 1, 2), ուր վեր է հանված այն մեծ ազդեցութիւնը (դրական կամ բացասական), որ ունի զավակը իր հարազատ ծնողների տրամադրութեան վրա: Մոտավորպես նույն բանն է ասված նաև հետևյալ հայկական առած-ասացվածքների մեջ. «Տղեն որ լավ ըլնի, իրա հոր տունը կը շինի» (263), «Հասկացող որդին հոր աջու աչքն է» (264), «Անառակ որդին տունը լաց կը բերե» (261) և այլն:

Սողոմոնի Առականներում կարգում ենք. «Բարկութիւն կորուսանէ զիմաստունս» (դլ. ԺԴ, 35), «Իրեւ ցեց հանդերձի եւ որդն փայտի, նոյնպէս տրտմութիւն վնասակար է սրտի առն» (զլ. ԼԵ, 20): Այստեղ ընդգծված են այն բացասական ներգործութիւնն ու ծանր հետևանքները, որ ունենում եւ մարդու ֆիզիկական ու հոգեկան վիճակի վրա վրդովմունքն ու վիշտը: Եւ այն զուգահեռներն են և հետևյալ հայկական առած-ասացվածքները. «Էլավ սիրտ՝ կտրեց զլոխ, իջավ սիրտ՝ չը գտավ զլոխ» (51), «Թունդ բացախը իրա ամանը կը նախացնի» (51), «Յավը մարդի ցեցն ա, ջանը կուտի» (62), «Հոգը ցավ կը բերե, ցավը՝ մահ» (61) և այլն:

Սողոմոնի Առականներում կարգում ենք. «Մահ եւ կեանք ի ձեռս լեզուի» (զլ. ԺԸ, 21), ուր մի երկու բառով խտացված է այն դրական (շինարար) և բացասական (կործանարար) դերը, որ խաղում է մարդկային լեզուն հասարակական կյանքում, իբրև վերջինիս հզոր գործոններից մեկը:

Ահա և լեզվի այդ դերի մասին խոսող հայկական առած-ասացվածքները. «Աշխարհի շինողն ու քանդող լեզուն է» (240), «Քանի լեզու՝ էնքան մարդ» (240), «Թրի կտրածը կը լավանա, լեզվի կտրածը չի լավանա» (239), «Ուտով ընկնողը կը բարձրանա, լեզվով ընկնողը չի բարձրանա» (240) և այլն:

Բերված օրինակներով շեն սահմանափակվում Սողոմոնի Առականների և հայկական առած-ասացվածքների մեջ եղած նմանութիւններն ու ընդհանրութիւնները: Դրանց թիվը կարելի էր ավելացնել: Սակայն բավարարվենք այսքանով և տեսնենք, թե ի՞նչ են հուշում տվյալ զուգահրութիւնները:

Քննութեան առարկա նմանութիւնների ու ընդհանրութիւնների մի զգալի մասը, անկասկած, այն սովորական համընկնումներից կամ զուգահրութիւններից են, որոնք բնորոշ են աշխարհի զանազան վայրերում ապրող ցեղերի, ժողովուրդների ու ազգերի ավանդական բանահյուսութեան տարբեր տիպի երկերին, այդ թվում նաև առականներին կամ առած-ասացվածքներին: Այդօրինակ ստեղծագործութիւններն են վերը բերված առած-ասացվածքներից նրանք, որոնք երևան են հանում, հիմնականում, իմաստային նմանութիւններն ու ընդհանրութիւններ, զանազանվելով իրարից իրենց արտաքին ձևով՝ պատկերահամեմատութիւններով, այլարանութեան առարկաներով, բառաշարով և այլն: Դրանք՝ մի կողմից՝ հին երբայեցիների, ասորիների ու հույների, մյուս կողմից՝ հայոց բառ ու բանի այն նմուշներից են, որոնց ընդհանրութիւնները, ինչպէս առհասարակ տարբեր ժողովուրդների բանավոր ստեղծագործութեան այլ և այլ բնագավառներում առկա ընդհանրութիւնների մի զգալի մասը, բացատրվում է գլխավորապէս նույն այդ ժողովուրդների կյանքի ընդհանուր պայմաններով կամ այդ պայմանների մեջ եղած ընդհանրութիւններով, վերջիններիս վրա հեցած նրանց կենսափորձի, աշխարհամբանման, կենցաղի ու հոգեբանութեան նմանութիւններով:

Նշված նմանությունների ու ընդհանրությունների մյուս մասը, գլխավորապես, բառացի համընկնումներ ու նույնություններ են: Դրանք, մեր կարծիքով, Սողոմոնի Առականերից, գրավոր ճանապարհով, հայոց բառ ու բանին անցած այսպես կոչված փոխառություններ են, մի երևույթ, որի փաստերին մենք նույնպես ականատես ենք լինում տարբեր ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ, և որը հետևանք է տվյալ ժողովուրդների պատմական անցյալում տեղի ունեցած ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ կուլտուրական փոխադարձ շփման ու ազդեցության: Դժվար է գտնել այնպիսի մի ժողովուրդ, որն իր պատմական գոյության ընթացքում, ավելի կամ պակաս, շփումներ ու հարաբերություններ ունեցած չլինի մոտ ու հարևան ժողովուրդների հետ, գրավոր կամ բանավոր ճանապարհով հաղորդակից եղած չլինի վերջիններիս գոյին ու գիտակցությանը: Դարավոր այդ շփումների ու հարաբերությունների միջոցով էլ ահա, տնտեսական, մշակութային այլ արժեքների հետ, մի ժողովրդից մյուսին են անցել նաև նրա բանավոր ստեղծագործության որոշ նմուշներ, մասնավորապես դրանցից այնպիսիք, որոնք ներքին աղերս ու հարազատություն են ունեցել տվյալ ժողովրդի բնիկ և ինքնուրույն համապատասխան ստեղծագործությունների հետ:

Այս կարգի փոխառություններ են ահա և Սողոմոնի Առականերից հայ բանահյուսությանն անցած իմաստալից պատգամներն ու թևավոր խոսքերը: Ստեղծագործական ուշագրավ մի ներթափանցում է դա, որի հիմքը հանդիսացել է հիշյալ պատգամների ու թևավոր խոսքերի մեջ արժարժված հասարակական, բարոյական, կենցաղային, փիլիսոփայական խնդիրների հարազատությունը հայ ժողովրդի լայն շրջանների համար:

Այսպիսի բնույթ ու բովանդակություն և այսպիսի ընկալում ու տարածում է ունեցել Սողոմոնի Առականեր ժողովածուն Հայաստանում՝ հայատառ առաջին ժողովրդային գիրքը մեզանում, մի գիրք, որի թարգմանիչն է եղել հայ ժողովրդի անդրանիկ մեծ երախտավորը՝ պատմական Հայաստանի Մուշ-Տարոն գավառի Հացիկ գյուղի բնակիչ Վարդանի որդի Մեսրոպ Մաշտոցը:

## МЕСРОП МАШТОЦ И АРМЯНСКАЯ СЛОВЕСНОСТЬ

А. Т. ГАНАЛАНЯН

(Р е з ю м е)

По свидетельству Корюна, ученика и соратника Месропа Маштоца, известно, что первым литературным произведением, написанным армянскими письменами, является перевод одной из интересных книг Ветхого Завета — притч Соломона. Перевод этот был сделан Маштоцом и двумя его учениками непосредственно после создания армянского алфавита.

Притчи Соломона — своеобразный сборник устных заветов и крылатых выражений древних евреев, в котором на соответствующих примерах, взятых из жизни природы, животных и человеческого общества, при помощи иносказаний, метафор, противопоставлений и других выразительных средств раскрываются явления общественной жизни и человеческие взаимоотношения.

То обстоятельство, что Месроп Маштоц счел целесообразным в первую очередь перевести на армянский язык не Новый Завет, т. е. Евангелие, а сборник притч, приписываемых легендарному Соломону, говорит о том, что в данном случае предметом заботы великого просветителя является также создание для своих соотечественников книги интересного и доступного содержания и воспитательного характера.

Получив перевод притч Соломона, сделанный рукой своего первого великого учителя, армянский народ тем самым приобщился к вековой мудрости, завещанной ему через Маштоца. Эти притчи с течением времени привились в Армении, приобрели местный колорит, подверглись переработке сообразно народному духу и стилю и, войдя в строй оригинальных, национальных притч и поговорок, слились с этими последними, по-своему обогатив сокровищницу армянской словесности.